ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հիմնական միջոցների վերագնահատման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՊԸԾՁԲ-01/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» մայիսի 2017թ.

Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Տոնականյան՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ),

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Մելքոնյան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Էլլադա Արզաքանյան՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Անահիտ Ավագյան՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ,

Աղավնի Բուդուլյան՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՊԸԾՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2017թ.-ի մայիսի 05-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման առարկայի նախահաշվային գինը /ՀՀ դրամ/
1.	Գնահատման հետ կապված խորհրդատվական ծառայություններ /հիմնական միջոցների վերգնահատման ծառայություններ/	**900 000**

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը
«ԿՌՈՒՆԿ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Գ. Նժդեհի 2
«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	ք. Երևան, Նալբանդյան 48/1, Սախարով բ/կ, 5-րդ հարկ
«Էյ Էնդ Էմ Ֆայնեշլ Քոնսալթինգ» ՓԲԸ	-
«ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ	ք. Երևան, Տիգրան Մեծի 49
«Երևանի«Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ	ք. Երևան, Ագաթանգեղոս 6/1
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	Հանրապետության փ. 22, տարածք 16, 5-րդ հարկ
«Ա.Գ.Բորսա» ՍՊԸ	ք. Երևան, Աղայան 9, բն. 89
«Օրրան» ՍՊԸ	ք. Երևան, Ն. Զարյան 21շ. 34 բն.

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1. «ԿՌՈՒՆԿ» ՍՊԸ-ի, «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի, «ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի, «Երևանի«Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ-ի, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի, «Ա.Գ.Բորսա» ՍՊԸ-ի, «Օրրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

4.2. «Էյ Էնդ Էմ Ֆայնեշլ Քոնսալթինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող փաստաթղթերը. Համակարգում որևէ փաստաթուղթ /այդ թվում՝ գնային առաջարկները/ կցված չեն երևում /հնարավոր չէ դիտել ֆայլերը/: Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ եթակետով՝ հանձնաժողովը որոշեց «Էյ Էնդ Էմ Ֆայնեշլ Քոնսալթինգ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Մասնակիցների առաջարկած գներն են՝

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	«ԿՌՈՒՆԿ» ՍՊԸ	900 000	-	900 000
2	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	3 450 000	690 000	4 140 000
3	«ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ	7 500 000	-	7 500 000
4	«Երևանի«Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ	2 320 000	-	2 320 000
5	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	11 730 000	2 346 000	14 076 000
6	«Ա.Գ.Բորսա» ՍՊԸ	3 500 000	-	3 500 000
7	«Օրրան» ՍՊԸ	1 900 000	-	1 900 000

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1. «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի, «Ա.Գ.Բորսա» ՍՊԸ-ի, «Օրրան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտերում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, որոնք գնահատվում են բավարար:

6.2. «ԿՌՈՒՆԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում <<Պարզեցված ընթացակարգերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում>> (Հավելված 1)-ը թերի է շարադրված:

6.3. «ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում էլեկտրոնային ֆայլերը վնասված են, այդ թվում՝ գնային առաջարկը: Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ եթակետով՝ հանձնաժողովը որոշեց «ԱՆՏ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

6.4. «Երևանի«Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում էլեկտրոնային ստորագրությունը վավեր չէ, այդ թվում՝ գնային առաջարկը և տուժանքի մասին համաձայնագրում բացակայում է ամսաթիվը: Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի 4-րդ եթակետով՝ հանձնաժողովը որոշեց «Երևանի«Ադամանդ» ապրանքա-հումքային բորսա» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ հանձնաժողովը նիստը կասեցրել է մեկ աշխատանքային օրով և հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մայիսի 10-ին, ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անահամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Է. Տոնականյան

(ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

Է. Մելքոնյան

(ստորագրություն)

Է. Արզաքանյան

(ստորագրություն)

Ա. Ավագյան

(ստորագրություն)

Ա. Բուդուլյան

(ստորագրություն)

Գնումները համակարգող՝

Դ. Թովմասյան

(ստորագրություն)